

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/13-1**

ք. Երևան

09 .10.2019թ.

«Վաշտպանության նախարարությունը, ի դեմս «Վաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ Գնորդ) մի կողմից, և «Մեգա Էներջո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՞ր՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### 2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14 819 999.94 (տասնչորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար ինը հարյուր իննսունինը դրամ իննսունչորս լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույ պայմանագրի 1-ին, 2-րդ, 43-րդ և 44-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացառական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՆՎԱԿԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

Ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿ վարչությունը:

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բագրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Կ 900011144079  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



«Մեզա Էներգո» ՍՊԸ  
ք. Երևան, Նոր-Նորք, Քոչինյան 4  
«Անարիտաս» ՓԲԸ,  
Հ/Կ 157002703880100  
ՀՎՀՀ 00170838



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳԵՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

Ձ/հ	Գնման առարկան	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիր
1	լարման փոխակերպիչներ	TC-2000G	220 converters	ԱՄՆ	Հոսանքի փոխակերպիչ TC-2000G, մուտքային լարումը 220Վ/110Վ(±3%), ելքային լարումը 110Վ/220Վ(±3%), հզորությունը առնվազն 2 ԿՎտ, 220Վև 110Վ վարդակների առկայություն, առնվազն 20Ա(± 1%) հոսանքի ուժի ավտոմատ անջատիչի առկայություն: Արտադրության տարեթիվ 2017թ.
2	քաշիչ սարքեր	ՍԱ3	ՍԱ3	Ռուսաստան	Ավտոմատ պաշտպանիչ բլոկ (ՍԱ3) մուտքային բլոկ, ամպերմետրով: Արտադրության տարեթիվ 2002թ.
3	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՍ15Բ, մետաղյա կերամիկական գեներատորային տեղորոգ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների գեներացիայի և հզորացման համար, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 140գրամ (±0.5%): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակասքան 70 %-ին:
4	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՍ14, տիտանակերամիկական գեներատորային տրիոդ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների գեներացիայի և հզորացման համար սանտիմետրային և մետրային տիրույթում, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 500 ժամ, քաշը 20 գրամ(±0,5%): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
5	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ 6Ս17Կ, մետաղյա կերամիկական գեներատորային տրիոդ, նախատեսված է բարձր հաճախության տատանումների լարման գեներացիայի և հզորացման համար, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 5 գրամ(±0,2%): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
6	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ 6Ժ9Պ, բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 15 գրամ(± 0.3%) : Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
7	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ 6Ժ11Պ, բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 17 գրամ(± 0.3%) : Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակասքան 70 %-ին:
8	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ 6Է5Պ, ելքային բարձր հաճախության տեղորոգ, նախատեսված է լարման և հզորության հզորացման համար, անխափան

					աշխատատևողության ժամկետը առնվազն 500 ժամ, քաշը 20 գրամ( $\pm 0.3\%$ ), խրոցային լարերը PWB: Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
9	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՈՒ43Բ, գեներատորային տետրոդ, նախատեսված որպես ուժեղարար բարձր հաճախության տատանումների համր, միաշերտ ազդանշանների ուժեղացում ռադիոհաղորդիչ սարքավորումներում 100 Մհգ( $\pm 10\%$ ) հաճախականության տիրույթում 1,6 կՎտ( $\pm 0.2\%$ ), մետաղակերամիկական ձևավորմամբ, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 1500 գրամ( $\pm 0.4\%$ ): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
10	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ 6Ժ10Պ, ապակյա տարայով բարձր հաճախության պենտոդ, նախատեսված է լարման լայնաշերտ հզորացման համար, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 2000 ժամ, քաշը 15 գրամ( $\pm 0.2\%$ ): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
11	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՈՒ17, երկնառագայթային տետրոդ, աշխատում է որպես գեներատոր և ուժեղարար բարձր հաճախության տատանումների համար 250 Մհգ ( $\pm 10\%$ ), ապակյա տարայով, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 400 ժամ, քաշը 25 գրամ( $\pm 0.2\%$ ): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
12	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՈՒ74Բ, գեներատորային տետրոդ, նախատեսված որպես ուժեղարար միաշերտ ռադիոհաղորդիչ սարքավորումներում 60 Մհգ( $\pm 10\%$ ) հաճախականության տիրույթում, մետաղակերամիկական ձևավորմամբ, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 550 գրամ( $\pm 0.3\%$ ): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
13	վակուումային լամպեր			Ռուսաստան	Լամպ ԳՈՒ78Բ, գեներատորային տետրոդ, նախատեսված որպես ուժեղարար բարձր հաճախության տատանումների համար, միաշերտ ազդանշանների ուժեղացում ռադիոհաղորդիչ սարքավորումներում 250 Մհգ ( $\pm 10\%$ ) հաճախականության տիրույթում 2,5 կՎտ( $\pm 2\%$ ), մետաղակերամիկական ձևավորմամբ, անխափան աշխատատևողության ժամկետը առնվազն 1000 ժամ, քաշը 1800 գրամ( $\pm 0.3\%$ ): Արտադրության տարեթիվը համապատասխանի պահպանման ժամկետի ռեսուրսի ոչ պակաս քան 70 %-ին:
14	էլեկտրոնային մոդուլների մասեր			Չինաստան	IC F-211 ո/կ-ի RA30H4452M տրանզիստոր, ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների (440- 520 MHz) հզորության ուժեղարարների համար, հզորությունը 30 վտ-ից ոչ պակաս, ելքային լարումը մինչև 12.5վ( $\pm 0.1\%$ ), թոյլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-40^{\circ}\text{C}$ -ից $+110^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.:

15	էլեկտրոնային մոդուլների մասեր			Չինաստան	IC F-211 n/Կ-ի RA30H4047M տրանզիստոր, ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների (400- 470 MHz) հզորության ուժեղարարների համար, ելքային հզորությունը ոչ պակաս քան 30 վտ, ելքային լարումը մինչև 12.5վ(±0.1%), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը -40 ° C-ից +110° C: Արտադրության տարեթիվ 2017թ.
16	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 134ԻՄ2 (155ԻՊ2), պարունակում է 178 ինտեգրալային էլեմենտ, մոտքային լարումը 5վ±10%, հոսանքի ծախսը 12մԱ(±0.01%), քաշը 1.3գ(± 0.3%), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը -60 ° C-ից +125° C: Արտադրության տարեթիվ 2017թ.
17	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ2Ա, լարման կարգավորիչ, պարունակում է 24 տրամաբանական էլեմենտ, մոտքային լարումը 40վ(±0.01%), ելքային լարումը 12-30վ, հոսանքի ծախսը 150մԱ(±0.01%), քաշը 1.4գ(±0.001%), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը -60 ° C-ից +125° C: Արտադրության տարեթիվ 2017թ.
18	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ3, լարման կարգավորիչ, մոտքային լարումը ոչ պակաս 40վ, ելքային լարումը 3-30վ, հոսանքի ծախսը 150մԱ(±0.2%), քաշը 3գ(±0.001%), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը -60 ° C-ից +125° C: Արտադրության տարեթիվ 2017թ.
19	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 142ԵՆ5Ա, լարման կարգավորիչ, պարունակում է 39 տրամաբանական էլեմենտ, մոտքային լարումը 15վ, ելքային լարումը 5 վ (±0.1%), հոսանքի ծախսը 3Ա(±0.01%), քաշը 5գ(±0.01%), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը -60 ° C-ից +125° C: Արտադրության տարեթիվ 2017թ.
20	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային փոխանցատիչով միկրոսխեմա 168ԿՏ2Ա, պարունակում է 4 ինտեգրալային էլեմենտ և 4 դիոդ, քաշը 1գ(±0.0001%) Արտադրության տարեթիվ 2017թ.
21	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 134ԼՌ1, 4 տրամաբանական 2Ռ-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ Արտադրության տարեթիվ 2017թ.
22	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԻՌ2 կամ համարժեք, կրկնակի 4 ստատիկ քայլի ռեգիստոր, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ, քաշը 0.8գ(±0.0001%) Արտադրության տարեթիվ 2017թ. և բարձր
23	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼՍ1, պարունակում է 3 տրամաբանական Ռ-ՈՍՈ էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ: Արտադրության տարեթիվ 2017թ.
24	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 164ՏՍ1, պարունակում է 2 D տիպի տրիգեր, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ: Արտադրության տարեթիվ 2017թ.
25	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 164ԼԵ5, պարունակում է 2 տրամաբանական 2ՈՍՈ-HE էլեմենտ, մաքսիմալ աշխատանքային ժամանակը 100 000 ժամ Արտադրության տարեթիվ 2017թ.
26	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Չինաստան	կարգավորման փոխակերպիչ, DUPC494C, 16 կոնտակտներով պլաստիկ DIP, սնուցման լարումը 7-40վ, ելքային լարումը ոչ պակաս 40վ, հոսանքի ուժը ոչ պակաս 250 մա, թույլատրելի

					ջերմաստիճանային տիրույթը $-55^{\circ}\text{C}$ -ից $+85^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.
27	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Չինաստան	Դրական լարման արգավորիչ, TA7808F, մուտքային լարումը 14վ, ելքային լարումը ոչ պակաս 8.3վ, հոսանքի ուժը 500մա , թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-30^{\circ}\text{C}$ -ից $+80^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.
28	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	Ինտեգրալային միկրոսխեմա 526ՊՍ1, կրկնակի բալանսով: Արտադրության տարեթիվ 2017թ.
29	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ			Ռուսաստան	միկրոսխեմա 2SU622 , տրանզիստորային ք-ո-ք մատրիցայով, ելքային հզորությունը ոչ պակաս 400 մՎտ, առավելագույն ելքային լարումը 40վ, քաշը 0.4գ( $\pm 0.0001\%$ ) Արտադրության տարեթիվ 2017թ.
30	տպասխեմաներ			Իսրայել	Տպասալ 24SLS Coral-ի համար Tadiran Coral 24 պորտի անալոգային քարտ(չլինեն վաճառողի կողմից կամ գործարանային պայմաններում վերականգնված, Pre-Owned կամ Refurbished): Արտադրության տարեթիվ 2011թ.
31	տպասխեմաներ			Իսրայել	Alcatel 4400 հեռախոսային համակարգի համար Alcatel PRA2 տպասալ, 30 կապուղու ISDN քարտ: Արտադրության տարեթիվ 2002թ.
32	դիոդներ			Չինաստան	Դիոդային կամուրջ KBU85, լարումը մինչև 800վ, հոսանքի ուժը ոչ պակաս քան 10Ա, թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-50^{\circ}\text{C}$ -ից $+150^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.
33	դիոդներ			Չինաստան	Բարձր արագությամբ փոխանցատիչ դիոդ CHNC202KPT կամ համարժեք, բեռի լարումը ոչ պակաս 80վ , ծախսը առավելագույնը 200մվ, թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-60^{\circ}\text{C}$ -ից $+125^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.
34	դիոդներ			Ռուսաստան	Ինֆրակարմիր ճառագայթող դիոդ ԱԼ107Բ կամ 3Լ107Բ, ճառագայթման հզորությունը ոչ պակաս 10մՎտ, թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-60^{\circ}\text{C}$ -ից $+85^{\circ}\text{C}$ Արտադրության տարեթիվ 2017թ.
35	տրանզիստորներ			Ռուսաստան	Կրկնակի տրանսպանական էմենտով միկրոսխեմա 136ԼՌ1, լարումը 6վ( $\pm 0.01\%$ ), թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-60^{\circ}\text{C}$ -ից $+125^{\circ}\text{C}$ Արտադրության տարեթիվ 2017թ.
36	տրանզիստորներ			Ռուսաստան	Տրանզիստոր ԿՏ956Ա (2Տ956Ա), կրեմնի ք-ո-ք ունիվերսալ անցումով, հզորությունը ոչ պակաս 70Վտ, առավելագույն լարումը ոչ պակաս 28վ, թույլատրելի ջերմաստիճանային տիրույթը $-60^{\circ}\text{C}$ -ից $+125^{\circ}\text{C}$ : Արտադրության տարեթիվ 2017թ.
37	տրանզիստորներ			Ռուսաստան	Տրանզիստոր Պ210Շ, գերմանիի ք-ո-ք ունիվերսալ անցումով, մետաղական կորպուսով, քաշը 37գ( $\pm 1\%$ ) Արտադրության տարեթիվ 2017թ.
38	տրանզիստորներ			Ռուսաստան	Տրանզիստոր Պ217Վ, գերմանիի ք-ո-ք ունիվերսալ անցումով, մետաղական կորպուսով, քաշը 12.5գ ( $\pm 1\%$ ) Արտադրության տարեթիվ 2017թ.
39	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր			Վիետնամ	Մինի ԱՀԿ-ի-Panasonic KX-TA30874 ընդլայնման քարտ: Արտադրության տարեթիվ 2017թ.
40	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր			Վիետնամ	Մինի ԱՀԿ-ի-Panasonic KX-TDA100/200 սնուցման բլոկ KX-TDA0104XJ, ելքային լարումը հաստատուն $+40\text{վ} +2.4\text{Ա}$ ; $+30\text{վ} 0.73\text{Ա}$ ; $+40\text{վ} 0.4\text{Ա}$ ;Արտադրության տարեթիվ 2017թ.
41	ավտոմատային			Ռուսաստան	Լսափող ՄՏ-50, հաղորդող ուժեղարարի

	հեռախոսային կայանների սարքեր			տան	տպասայով, աղմկակայուն DՅՄԱ-1A միկրոֆոնով, DՅՄԿ-6A լսափողով, հավաքված ռետինե ականջակայուն, 5 ժլանոց երկարացման լարով Արտադրության տարեթիվ 2017թ.
42	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր			Չինաստան	Արոնենտային տպասալ զոյգ լարանի վերջույթներով, միկրոհեռախոսային լար, վարդակով լար, կլասան KC-60, թերմոկոճ TK-1, լիցքաթափիչ ՌԲ-5 Արտադրության տարեթիվ 2010թ.
43	հեռախոսային սարքեր	Grafit 4020	Alcatel	Ֆրանսիա	Հեռախոսային ապարատ Grafit 4020, Alcatel հեռախոսակայանների համար, հեռախոսի տիպը VoIP, էկրանի տիպը LCD, ինտերֆեյսը LAN, գծերի քանակը ոչ պակաս 12, ներքին հեռախոսագրքի առակայություն, զանգվող համարի որոշիչ, կոնֆերանս կապի հնարավորություն, բարձրախոսի հնարավորություն, քաշը ոչ պակաս 880 գրամ: Արտադրության տարեթիվ 2016թ.
44	հեռախոսային սարքեր	Panasonic	Panasonic	Վիետնամ	Միստենային հեռախոսային ապարատ KX-7633, Panasonic TDA-100 տիպի ավտոմատ հեռախոսային կայանի համար, դիսկիելը առնվազն 3 տող, 24 սիվոլ: Հեռախոսը պետք է ունենա բարձրախոսի, գարնիտուրայի միացման, զանգի, հաղորդակցության ցուցիչի հնարավորության ապահովում, ծրագրվող ստեղծների քանակը առնվազն 24, ֆունկցիոնալ ստեղծների քանակը առնվազն 4, ինտերֆեյսի տիպը USB: Արտադրության տարեթիվ 2017թ.
45	հեռախոսների կոնոտացիոն սարքավորումներ				KRONE 6089 i 102- 02 պլինտ, LSA- ՊԼԻՍ 2/10՝ միացվող կոնտակտներով: Արտադրության տարեթիվ 2017թ.

**Ծանոթություն՝**

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ

Ապրանքը մատակարարվելու է վաճառողի կողմից ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՎ վարչության պահեստ՝ Երևան, ՀՀ ՊՆ 31549 զորամաս:

**ԳՆԱՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Չ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2019թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						4-րդ, բայց ոչ քան 30.11.2019թ.
1	լարման փոխակերպիչներ	հատ	25	72000	1800000	25
2	բաշխիչ սարքեր	հատ	2	135000	270000	2
3	վակուտմային լամպեր	հատ	50	13200	660000	50
4	վակուտմային լամպեր	հատ	50	4320	216000	50
5	վակուտմային լամպեր	հատ	50	3600	180000	50
6	վակուտմային լամպեր	հատ	50	900	45000	50
7	վակուտմային լամպեր	հատ	50	1800	90000	50
8	վակուտմային լամպեր	հատ	30	1200	36000	30
9	վակուտմային լամպեր	հատ	8	60000	480000	8
10	վակուտմային լամպեր	հատ	50	1440	72000	50
11	վակուտմային լամպեր	հատ	50	1440	72000	50
12	վակուտմային լամպեր	հատ	5	54000	270000	5
13	վակուտմային լամպեր	հատ	5	105600	528000	5
14	էլեկտրոնային մոդուլների մասեր	հատ	1	24000	24000	1
15	էլեկտրոնային մոդուլների մասեր	հատ	2	12000	24000	2
16	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	2400	48000	20
17	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	4500	90000	20
18	էլեկտրոնային ինտեգրալ	հատ	20	9000	180000	20



	սխեմաներ					
19	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	4500	90000	20
20	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	3600	72000	20
21	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	2400	48000	20
22	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	1800	36000	20
23	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	1800	36000	20
24	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	1800	36000	20
25	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	1800	36000	20
26	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	10	2400	24000	10
27	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	10	3600	36000	10
28	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	3600	72000	20
29	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	հատ	20	2400	48000	20
30	տպասխեմաներ	հատ	8	570000	4560000	8
31	տպասխեմաներ	հատ	2	450000	900000	2
32	դիոդներ	հատ	15	4800	72000	15
33	դիոդներ	հատ	10	3600	36000	10
34	դիոդներ	հատ	50	360	18000	50
35	տրանզիստորներ	հատ	80	2250	180000	80
36	տրանզիստորներ	հատ	5	18000	90000	5
37	տրանզիստորներ	հատ	100	810	81000	100
38	տրանզիստորներ	հատ	100	600	60000	100
39	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	հատ	3	72000	216000	3
40	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	հատ	4	132000	528000	4
41	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	հատ	100	10800	1080000	100
42	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	հատ	7	68571.42	479999.94	7
43	հեռախոսային սարքեր	հատ	5	60000	300000	5
44	հեռախոսային սարքեր	հատ	5	60000	300000	5
45	հեռախոսների կոմուտացիոն սարքավորումներ	հատ	200	1500	300000	200

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Արշակունյացի մարզպետարան»

«Արշակունյացի կապիտալի տնօրեն»

Ս. ՄԱՍԻՍՅԱՆ  
  
  
 Ա. ՂԱՍԻՍՅԱՆ

Տնօրեն:

«Արշակունյացի» ՍՊԸ  
  
 Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

Վճարման Ժամանակացույց

«Ն» դրամ

Զ/Ի	Գնման առարկան	CPV կոդը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան, 10.12.2019թ., ընդ որում՝		
			Իրկտեմներ	Նյութեր	Իրկտեմներ
1	լարման փոխակերպիչներ	31171200/1	1800000	1800000	1800000
2	բաշխիչ սարքեր	31211240/1	270000	270000	270000
3	վակուումային լամպեր	31711330/10	660000	660000	660000
4	վակուումային լամպեր	31711330/11	216000	216000	216000
5	վակուումային լամպեր	31711330/12	180000	180000	180000
6	վակուումային լամպեր	31711330/13	45000	45000	45000
7	վակուումային լամպեր	31711330/14	90000	90000	90000
8	վակուումային լամպեր	31711330/15	36000	36000	36000
9	վակուումային լամպեր	31711330/19	480000	480000	480000
10	վակուումային լամպեր	31711330/20	72000	72000	72000
11	վակուումային լամպեր	31711330/7	72000	72000	72000
12	վակուումային լամպեր	31711330/8	270000	270000	270000
13	վակուումային լամպեր	31711330/9	528000	528000	528000
14	էլեկտրոնային մոդուլների մասեր	31711350/3	24000	24000	24000
15	էլեկտրոնային մոդուլների մասեր	31711350/4	24000	24000	24000
16	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/1	48000	48000	48000
17	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/10	90000	90000	90000
18	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/11	180000	180000	180000
19	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/12	90000	90000	90000
20	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/19	72000	72000	72000
21	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/2	48000	48000	48000
22	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/20	36000	36000	36000
23	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/21	36000	36000	36000
24	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/22	36000	36000	36000
25	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/23	36000	36000	36000
26	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/24	24000	24000	24000
27	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/25	36000	36000	36000
28	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/26	72000	72000	72000
29	էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	31711440/27	48000	48000	48000
30	տպասխեմաներ	31711510/2	4560000	4560000	4560000
31	տպասխեմաներ	31711510/3	900000	900000	900000
32	դիոդներ	31711610/1	72000	72000	72000
33	դիոդներ	31711610/3	36000	36000	36000
34	դիոդներ	31711610/4	18000	18000	18000
35	տրանզիստորներ	31711710/10	180000	180000	180000

36	տրանզիտորներ	31711710/15	90000	90000	90000
37	տրանզիտորներ	31711710/17	81000	81000	81000
38	տրանզիտորներ	31711710/18	60000	60000	60000
39	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	32541400/15	216000	216000	216000
40	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	32541400/16	528000	528000	528000
41	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	32541400/17	1080000	1080000	1080000
42	ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր	32541400/18	479999.94	479999.94	479999.94
43	հեռախոսային սարքեր	32551160/3	300000	300000	300000
44	հեռախոսային սարքեր	32551160/4	300000	300000	300000
45	հեռախոսների կոմուտացիոն սարքավորումներ	32551270/1	300000	300000	300000

Շանթություն՝ Կենտրոնն ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳԼՈՐԴ


ՎԱՃԱՌՈՂ

«Ազատ պաշտպանության նախարարություն»


«Անգա ենթագո» ՍՊԸ

«Ազատ պաշտպանության նախարարի ներակալ»

Տնօրեն



Ի. ՂԱՄԲԱՐՅԱՆ



Դ. ՄԱՅՍԱԿԱՆՅԱՆ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դրուս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_  
 ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N \_\_\_\_\_  
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_  
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը \_\_\_\_\_ պայմանագրի համարը  
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
Ստորագրություն

#### Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն